ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ՄՈՍԿՈՒԱ. Ղ. ՔԵՄԵՋԷՃԵԱՆ.—Ձեր երկրորդ լօդուածը չի կարող տպուիլ։

ԵՐԵՒԱՆ. Մ. Ց.—Ձեր բանաստեղծութիւնները չեն տպուիլ։

ԷՋՄԻԱԾԻՆ. ՍՐԲ. ՅՈՒՍԻԿ ԵՊՍ. Յօդուածը ստացանք և շարուում է. կտպուի միւս համարից։

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ. Տ. Վ. Մարկ Տվէն «Ոխերիմ թշնամին» կտպուի միւս անգամ։

*** ԽԱԴՈՒՆԻ. Նաղաշի «Լեզու» բանաստեղծութեան թարգմանութիւնը ստացանք։

ԲԱԳՈՒ. Օր. Ս. Տ.—ՅՈՎՀ. Ստացանք Նաումբերգի «բախտը» կտպուի № 2-ում։

ԲԱԳՈՒ. Գ. ԼՈՒՍԻՆԵԱՆ.—Վենետիկի կաթոլիկ Մխիթարեան միաբանութեան հաստատական և հայրական ժրաջան գործունէութեան նուիրուած Ձեր ընդարձակ լօդուածը դժբախտաբար անկարող ենք տպագրել։

ԱԽԱԼՑԽԱ. Ե. Վ. Մ.—Ձեր նամակը լրմամբ չէ մեր հանդիսին. ուստի և չի տպուիլ։

ԹԻՖԼԻՍ. ԵԶՈՊՈՍ. «Կարապի պատմութիւնը» ստացանք։

ՕԴԵՍԱ. Ա. ԳԻՒՐՋԵԱՆ.—«Երլդրզ քեօշկի եաեը» չի կարող տպուել։

ԹԻՖԼԻՍ. Ց. Խ. Անդրէ Ֆլեօրինի «գործքով բարոյականութիւն» ստացանք։

— Օր. ՄԱՐՋԱՆ.—«Մի փոքրիկ պատկերը» անլարմար է «Լումայ»-ի համար։ Եթէ մի ուրիշ լարմարլ օդուած ունես՝ կրկէ, սիրով կտպագրենք։

— ՕՐ. ՆՈՒԱՐԴ ***—Եդգէն Տուրի «Մարգարտէ մանեակը» ստացանք։

ԷՋՄԻԱԾԻՆ. Ց. Մ.—«Հանս Հայլիւզի ժալռերը» և բանաստեղծութիւնները ստացանք։

ԹԻՖԼԻՍ. Տ. Մ.—Ստացանք Օ. Շրայների «Պետէր Խօլկէտ»-ը։

ԷՋՄԻԱԾԻՆ. Ա. Տ.—Ձեր բանաստեղծութիւնները չեն կարող տպագրուիլ։

ՎԵՆԵՏԻԿ. «ԲԱԶՄԱՎԷՊ» ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ։ Վերջին տարիները մենք կանոնաւոր չենք ստանում Ձեր ամսատետրը. այդ մասին մինչև անգամ տպել ենք անցեալներում մեր պատասխանների մէջ և բազմիցս բողոքել Ձեր ապտեղի գործակալին. բայց չնայելով սորան, անցեալ տարի մենք ստացել ենք Ձեր թերթից միայն 6 համար. իսկ «Բազմավէպի» լաւելուած «Գեղունի» կոչուածից ոչ մի համար. մինչդեռ մենք ուղարկել ենք «Լումայ» իւր բոլոր լաւելուածներով։ Այժմ էլ ուղարկել է մեզ «Լու-

մալում» տպելու մի երկար յայտարարութիւն Բաղմավէպի և Գեղունու մասին։ Հետաքրքիր է, ինչ պարտական ենք մենք տպել Ձեր Գեղունու 4 երես յայտարարութիւնը, երբ մենք չենք էլ տեսել թէ ինչ դոյն ունի Ձեր Գեղունին։ Եւ բացի սորանից ինքներդ մեր յայտարարութիւնը չտպած՝ ձերն էք ուղարկում։ Ապիսի հանդամանքներում փոխանակութիւնը անկարելի է թւում մեզ։

Ինչ վերաբերում է «Բաղմավէպ»-ի տարուցս յունուար դրքի մէջ «Հումայ»-ի և նորա խմբագրի մասին արած կեղտոտ և մութ ակնարկներին, հրաւիրում ենք կաթոլիկ թերթի խմբագրութեան պարզ ասել, թէ ինչ է ուզում հասկացնել «լեղափոխական» և «մատնիչ» բառերով. որովհետև մեզ անհասկանալի են մի ոմն Երեմ.-ի խեղկատակութիւնները և մենք երբէք չենք էլ երազել մի որ և է կրօնական լետադէմ միաբանութիւն և նոցա քերան թերթը համարել լեղափոխական։ Ցոյց տուէք թէ «Հումայ»-ի ձր համարումն ենք ձեզ լեղափոխական անուանել։—Մենք կարիք չունինք ձեր թերթը սպաննելու վերայ մտածել, վասնզի թերթը իւր արդի ուղղութեամբ ինքն իրեն կսպանուի։

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Մ. Գորկիյ, Ամալի դաշտում. թարգմ. Ս. Մ. Իսահակեան. Ալէքս. 1902

Գրաֆ. Ն. Սուվորով. Եկեղեցու և պետութեան յարաբերութիւնները. ռուս. թարգմ. Պետրոս Տէր Յարութիւնեան. խմբ. Ս. Տիգրանեանի, Վաղարշապատ 1902.

Юрій Веселовскій. Армянскій поэтъ Смбатъ Шах-Азизъ Москва 1902

Դրախտի ընտանիք. գրեց Խրիմեան Հայրիկ, հինգերորդ տպ. Թիֆլիս 1902.

Շահրիար. Ջհուդ Քուչան. վէպ Պարսկաստանի կեանքից. Թիֆլիս 1902.

Էմմ. քահ. Նաղարեանց. Ոտանաւորներ երեխաների համար 15 պատկ. Մոսկուա 1903

Օրացոյց 1903 ամի. Վաղարշապատ.

Տիգրան Նաւասարդեանց. Հայ ժողովրդական հէքիաթներ. Թ. գիրք. Թիֆլիս 1902.